



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

23 փետրվարի 2017թ.

N 12-Ս

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՍՈՒՔՅԵՏՆԵՐԻ
ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐՈՒՄ ԵՂԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ
ԿԱԶՄՎԱԾ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը **ա ղ ո շ ը լ է**:

1. Ի գիտություն ընդունել Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017 թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի քարոզչությանը մասնակցող սուբյեկտների քարոզչական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից կազմված տեղեկանքը (կցվում է):

2. Սույն որոշման 1-ին մասում նշված տեղեկանքը տեղադրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱԼՔ

Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի քարոզչությանը մասնակցած կուսակցությունների քարոզչության հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ

Համաձայն «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 21-րդ և ԼՂՀ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածների՝ «Ազատ հայրենիք», Արցախի Ժողովրդավարական կուսակցություն և «Ազգային վերածնունդ» կուսակցությունները ձևավորել են հանրաքվեի քարոզչության հիմնադրամներ:

ԼՂՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի 2017թ. հունվարի 20-ի N 3-Ա որոշմամբ ստեղծված վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից վերահսկվել է քարոզչության հիմնադրամների ձևավորման, հիմնադրամներ կատարված կամավոր մուծումների, դրանց հաշվարկման և ծախսերի իրականացման ողջ գործընթացը: Այդ գործարքների իրականացման համար կուսակցություններին ցուցաբերվել է ամենօրյա մեթոդական և գործնական օգնություն: Նշված կուսակցությունները հանրաքվեի՝ իրենց քարոզչությունը ֆինանսավորելու նպատակով «Արցախբանկ» ՓԲԸ-ում և «Արդշինբանկ» ՓԲԸ-ում բացել են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ:

ԼՂՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կողմից ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ միջոցները կուսակցությունների կողմից քարոզչության հիմնադրամներ բացելու, համապատասխան գործառույթներ իրականացնելու և սահմանված ժամկետում հայտարարագրեր ներկայացնելու համար: ԼՂՀ-ում գործող բոլոր բանկերը ԼՂՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կողմից ժամանակին համապատասխան գրություններով տեղեկացվել են քարոզչություն իրականացնողների հետ հարաբերությունների իրավական հիմքերի մասին, նրանց տրամադրվել են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Նշված բանկերի համապատասխան աշխատողները հրահանգավորվել են քարոզչության հիմնադրամների գործառույթների իրականացման համար:

«Արցախբանկ» ՓԲԸ-ում և «Արդշինբանկ» ՓԲԸ-ում ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ բացելուց հետո, 3-օրյա պարբերականությամբ բանկերը ԼՂՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով են ներկայացրել տեղեկանքներ կուսակցությունների քարոզչության հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի մասին:

Կուսակցությունների լիազոր ներկայացուցիչները պարբերաբար հրահանգավորվել են քարոզչության հիմնադրամների՝ սահմանված կարգով ձևավորման, ծախսերի իրականացման և հավանական խախտումներից խուսափելու համար:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ուսումնասիրելով և ընդհանրացնելով ներկայացված հայտարարագրերը և մյուս փաստաթղթերը, պարզել է, որ կուսակցությունների քարոզչության հիմնադրամներում կատարված մուտքերի ընդհանուր գումարը կազմել է 5320.0 հազ. դրամ, ծախսերի գումարը կազմել է 5042.9 հազ. դրամ, մնացորդը՝ 277.1 հազ. դրամ:

Կուսակցությունների լիազոր ներկայացուցիչները հիմնականում բարեխղճորեն են կատարել իրենց հիմնադրամների հետ կապված գործառույթները: Քարոզչության հիմնադրամների ձևավորման, մուտքերի և ելքերի առումով կոպիտ խախտումներ չեն արձանագրվել:

**ԼՂՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի
վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար**

Գ. ՄԻՐԶՈՅԱՆ

22 փետրվարի, 2017թ.